ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	***Վանաձոր համայնքի թիվ 4 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում***
Մարզ	*Լոռի*
Համայնքը /համայնքները	*Վանաձոր* *Գուգարք* *Շահումյան* *Դարպաս*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*125* կմ, 0 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Համայնքի՝ 87 266 մարդ, Վանաձոր 77200 մարդ
Սահմանամերձ համայնք/բնակավայր	-
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո 2014թ
Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ **- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,** **- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,** **- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,** **- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր**	*Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599.33 հեկտար մակերես: Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է, խոշորացումից հետո միացվել են Գուգարք, Շահումյան և Դարպաս բնակավայրերը* ➢ *Համայնքի բնակիչների 73,5% ապահոված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, շուրջ 90% ունի կենտրոնացված կոյուղու համակարգ:* ➢ *Գազամատակարամամբ ապահովված է բնակչության շուրջ 98%::* ➢ *Գիշերային լուսավորվածությամբ փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 82%, լուսավորված փողոցների ընդհանուր երկարությունը 105 կմ*

փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	*է: Լուսատուների միայն 4% է LED լուսատուներ:*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	***Ծրագրով նախատեսվում է*** ***թիվ 4 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում*** *1988թ. ավերիչ երկրաշարժից հետո Վանաձորում վթարային դարձավ կամ ավիրվեց բնակֆոնդի և հանրային նշանակության շենքերի ավելի քան 50%-ը: Տարիների ընթացքում վթարային և վնասված մանկապարտեզների մի մասը վերանորոգվեցին ամրացվեցին:* *Սակայն հնարավոր չեղավ ամբողջովին վերացնել երկրաշարժի հետևանքները և ներկայումս Վանաձորի 20 մանկապարտեզներից 3-ը տնակային պայմաններում են գործում:* *Թիվ 4 մանկապարտեզը /Սայաթ-Նովա փ. / : Այն կառուցվել է երկրաշարժից հետո փայտե տնակում ՝ որպես երեխաների համար ժամանակավոր մանկապարտեզ, սակայն մինչ օրս՝ արդեն 33 տարի հնարավոր չի լինում լուծել այս խնդիրը:* *Ջեռուցումը կատարվում է փայտե վառարաններով:* *Այս տարիներին բարերարների և համայնքապետարանի միջոցներով կատարել են որոշակի վերանորոգման աշխատանքներ, փոխվել է սանհանգույցը, խոհանոցը, սակայն չի լուծվել գերակա խնդիրը՝ տնակային մանկապարտեզի փոխարինումը ժամանակակից քարե շենքով:* *Մանկապարտեզը գործում է 2 խմբով : Գտնվելով քաղաքի ծայրամասային խիտ բնակեցված թաղամասում, երեխաների թիվը հասնու մ է մոտ 60 –ի: Աշխատակիցներինը՝ 14:* *Քանի որ մանկապարտեզը տնակային է, տվյալ թաղամասի երեխաների հաճախում են այլ՝ նորմալ պայմաններով մանկապարտեզներ՝ ծանրաբեռնելով դրանք:* *Համայնքի զարգացումը դա մատաղ սերնդի զարգացումն է, որի համար շատ կարևոր է նոր ժամանակակից լուսավոր շենքային պայմաններով մանկապարտեզի կառուցումը: Այն կսպասարկի ծայրամասային խիտ բնակեցված թաղամասի երեխաներին:* *Շենքի կառուցումից հետո հնարավոր է բացել նոր խումբ, ստեղծելով նոր աշխատատեղեր:*
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	*Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի մանկապարտեզների հիմնորոգումը: Տվյալ ծրագրի իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ, որն իր ազդեցությունը կունենա համայնքի բնակիչների և այցելուների վրա:* *Ծրագրի իրականացման արդյունքում կթոթափենք երկարաշարժի հետևանքների ծանր բեռը, 21-րդ դարում կազատվենք* ***տնակային*** *մանակապարտեզից, կունենանք նորակառույց, սեյսմակայուն, էներգաարդյունավետ*

	ժամանակակից մանկապարտեզ ***«թիվ 4 մանկապարտեզի» շենքի կառուցումը*** *կնպաստի համայնքի մատաղ սերնդի համար ժամանակակից պայմաններով մանկապարտեզի ստեղծմանը, նրանց դաստիարակությանը, կրթությանը, էսթետիկ զարգացմանը: Մանկապարտեզը կունանեա 3 խումբ. ճաշարան, ունիվերսալ դահլիճ՝ որը կնպաստի նաև նրանց առողջ ապրելակերպին:* *Արդյունքում կունենանք՝* *1.Նորակառույց մանկապարտեզ* *2, 3 խումբ* *3. ունիվերսալ դահլիճ* *4. բարեկարգ բակ, խաղահրապարակով* *կբացվեն նոր աշխատատեղեր, կավելանա մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը, կլուծվի նրանց ծնողների աշխատանքի հարցը:* *Կթոթափվի մյուս մանկապարտեզների ծանրաբեռնվածությունը*
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	*Թիվ 4 մանկապարտեզի կառուցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները:* *Ծրագրի արդյունքին հասնելու գործողությունների պլան* 1. *Նախագծա-նախահաշվային աշխատանքներ* 2. *մրցույթի հայտարարում /30 -45օր/* 3. *արդյունքների ամփոփում/ մինչև 30օր/* 4. *Շին աշխատանքների մեկնարկ* 5. *Մշտադիտարկում /ծրագրի ընթացքում/* *Արդյունքում կունենանք 700 քմ տարածքով երկհարկանի նորակառույց մանկապարտեզ* Նախատեսել երկհարկանի կառույց Նախատեսել հետևյալ հիմնական սենքերը՝ 1. խմբասենյակներ՝ ննջարանով և սանհանգույցով 2. խոհանոց-ճաշարան 3. միջանցքներ 4. վարչատնտեսական սենյակներ 5. ունիվերսալ դահլիճ /սպորտային - հանդիսությունների/ 6. բացօթյա խողահրապարակ 7. տարածքի բարեկարգում և ցանկապատում
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	*Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների կադաստրային արժեքը 170 մլն դրամով :*
Ծրագրի ազդեցությունը	*1.«Թիվ 4 մանկապարտեզի» կառուցում ծրագրի շահառուները*

համայնքի և շահառուների վրա	*կլինեն Վանաձոր համայնքի 2-6 տարեկան երեխաները և նրանց ծնողները (շուրջ 100 երեխա)* *2.Կփոխվի հարմարավետության չափը 100%-ով* *3. Ծրագրի ավարտից հետ թիվ 4 մանկապարտեզ հաճախող սաների թիվը կլինի շուրջ 100, աշխատակիցներինը՝ 16:* *Մանկապարտեզի կառուցումը կնպաստի երեխաների կյանքի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը, օպտիմալ աճին, նրանց ստեղծագործական ընդունակությունների և հետաքրքրությունների զարգացմանը:* *Համայնքը վերջապես կլուծի հետերկրաշարժյան ևս մեկ խնդիր, ազատվելով տնակային մանկապարտեզից:*
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	*Թիվ 4 մանկապարտեզի կառուցման աշխատանքների ընթացքում նախատեսվում է 35 ժամանակավոր աշխատատեղ, իսկ ծրագրի իրականացման արդյունքում՝* ***16*** *հիմնական աշխատատեղ /դայակ, դաստիարակ, մեթոդիստ, տնտեսվար և այլն/*
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 4379689783 դրամ.* *Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր */1+2-3/,որից*	4379689783	3909820498	89.3
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները */1.2+2.2-3/* *այդ թվում՝*	3738267035	3268397750	87.4
1.Վարչական բյուջեի մուտքեր, որից՝	3161004827	3206695899	101.4
1.1 Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	23382292	23382292	100
1.2 Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	3137622535	3183313607	101.5
- Սեփական եկամուտներ	1079319100	1128497244	104.6
2.Ֆոնդային բյուջեի մուտքեր, որից	1414102656	703124599	49.7
2.1 Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	618040456	618040456	100
2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ	796062200	85084143	10.7
3.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	195417700	0	0
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր */1+2-3/, որից՝*	4379689783	3077076197	70.2
1.Վարչական բյուջեի ծախսեր	3161004827	2780771816	88,0
2.Ֆոնդային բյուջեի ծախսեր	1414102656	296304381	20,9
Հողի և գույքի օտարումից	-518900000	-603631815	116,3

	մուտքեր			
	Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը */Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝*	1933002656	899936196	46,6
	-Աշխատակազմի պահպանման ծախսեր	22400000	9195948	41,1
	- Ճանապարհային տրանսպորտ	934986282	475179715	50,8
	- Շրջակա միջավայրի պաշտպանություն	36500000	14709914	40,3
	- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	*465847300*	214015723	45,9
	- Մշակույթ	364120340	120402851	33,1
	- Կրթություն	109148734	66432045	60,9
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն	***			
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով				
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝	**80 682 780 դրամ (100%)**			
- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ,	*2 294 758*			
- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ,	*229 476*			
- ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ _____ դրամ,				
- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,	*1 137 660*			
- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,	*379 220*			
- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ				

փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, **ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ**	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	***24 204 834 դրամ (30%)***
Այլ ներդրողներ	**..... դրամ (.... %),** *նշել ներդրողի անունը:*
Ծրագրի իրականացման փուլողությունը	**Սկիզբը_հունիս _2022թ.** **Տևողությունը 7 ամիս**
Ծրագրի ծախսերը	*Շին աշխ. 76 491 920 դրամ:*
Ամսաթիվ	*25 մայիսի 2022թ.*

ԶԾ, ԱԿ և SS բաժնի պետ՝ **Լ.Դավթյան**
Email: vanadzorcity@mail.ru
Հեռ. 044040133

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար **Ա.ՓԵԼԵՇՅԱՆ**
(անունը, ազգանունը)

Կ. Տ

*** Վանաձոր խոշորացված համայնքը դեռևս չունի 2022թ.ավագանու կողմից հաստատված բյուջե: Առաջիկա ավագանու նիստին հաստատումից հետո, այն լրացուցիչ կտրամադրվի: